ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 24.09.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի Ավանի աղի կոմբինատի լեռնահատկացման տարածքից այգեգործական նպատակով քաղաքացիներին տրամադրված հողակտորների նկատմամբ քաղաքացիների հողօգտագործման իրավունքները վերականգնելու և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կանոնակարգելու մասին» հ.1129-Ն որոշման դրույթների համաձայն քաղաքացիներին տրամադրելու համար իրավահաստատող փաստաթուղթ հանդիսացող այգեգործական գրքույկի և, տվյալ դեպքում որպես իրավահասատատող փաստաթուղթ քաղաքացիներին տրված, այգեգործական անդամատոմսերի նույնական լինելու հարցերը պարզելու նպատակով հարցում է կատարվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը բարձրացված հարցը ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտեի քննարկմանը:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի գրության՝ Ավանի աղի կոմբինատի տնօրենը 1992 թվականի հուլիսի 29-ի համապատասխան հրամանով Ավանի աղի կոմբինատի լեռնային հողհատկացման տարածքից որոշ անօգտագործելի հողատարածություններ առանձին հողակտորների ձևով կոլելտիվ ադամներին հատկացրել է գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար:

Մինչև 2001 թվականի հունիսի 15-ը գործող ՀՀ հողային օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ այգեգործության /ամառանոցի/ համար քաղաքացիներին և կոլեկտիվներին սեփականության իրավունքով հողամասեր են հատկացնում սույն օրենսգրի 14-րդ հոդվածին համապատասխան հողամասեր հատկացնելու իրավունք ունեցող պատգամավորների խորհուրդները իրենց տնօրինությանը հանձնված հողերից՝ հողաշինարարության նախագծերի համապատասխան: Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հողամասեր քաղաքացիներին որպես սեփականություն, ինչպես նաև օգտագործման տրամադրելու իրավունք ունեցող մարմիններն են պատգամավորների գյուղական խորհուրդները, պատգամավորների քաղաքային /ավանային/ խորհուրդները, պատգամավորների շրջանային խորհուրդները: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի ժամանակ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ստեղծելու նպատակով սեփականության իրավունքով հողամասերը

տրամադրում են պատգամավորների տեղական խորհուրդները՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման համապատասխան հանձնաժողովների ներկայացմամբ:

Միաժամանակ Կադաստրի կոմիտեի կողմից տեղեկացվել է, որ Ավանի աղի կոմբինատի տնօրենի հրամանը (հողամասի հատկացման վերաբերյալ) և տրամադրված այգեգործի անդամատոմսերը չեն կարող հիմք հանդիսանալ այդ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքով պետական գրանցում կատարելու համար:

Հաշվի առնելով իրավասու մարմինների կողմից բարձրացված հարցի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները, հայտնում եմ, որ հարցի կարգավորման նպատակով քննարկումներ են ընթանում Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ:

Տեղեկացվում է նաև, որ քննարկումները դեռևս ավարտված չեն և դիմումատուների կողմից Երևանի քաղաքապետարան հասցեագրված Ավանի Աղի հանքի տարածքում գտնվող հողամասերի, այդ թվում նաև Աղի հանքի հ.37 հողամասի սահմանների ճշտման վերաբերյալ դիմումներին ի պատասխան տեղեկացվում է ոլորտին առնչվող համապատասխան ստորաբաժանումների հետ ներկայումս լրացուցիչ քննարկումներ ընթանալու և նշված քննարկումների ավարտից հետո հարցի քննարկմանը անդրադառնալու հնարավորության վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ